




## Յարութիւն Իսկահատեան, Պէյրութ, 26 Սեպտեմբեր 2021

Միութիւն եւ Յառաջդիմութիւն երիտթրքական կուսակցութիւնը 1908-ի յեղաշրջումէն առաջ եւ ետք յետամուտ եր երկրին մէջ զարգացնելու եւ զօրացնելու ազգայնամուլութիւնը, ի նպաստ թուրք ցեղին եւ ի վնաս քրիստոնեաներուն, որոնց կարգին մանաւանդ հայոց: Թուրքերը քրիստոնեայ ըսելով առաջին հերթին հիմնականօրէն հայերը նկատի ունէին: Թրքական ազգայնամուլութեան ծիրին մէջ զանազան գաղափարախօսութիւններ մէջտեղ կը նետուէին: Ասոնց շարժառիթները կեղծ ու շինծու էին եւ թելադրուած երիտթուրք ղեկավարութեան կողմէ: Այդ գաղափարախօսութիւնները կեանքի բնական զարգացումներու եւ հոլովոյթին իբրեւ արդիւնք եղող միտքեր չէին, այլ Օսմանեան Պետութեան կրած պարտութիւններու ճնշումէն մղուած՝ քաղաքական որոշումներ եւ հրեշային ծրագիրներ մշակելու գետին պատրաստելու կը միտէին, որոնք բոլորն ալ կը նպատակադրէին վերջ ի վերջոյ բնաջնջել հայ ազգը:

Ազգայնամուլութեան պայմանները գոհացնող կաղապարուած գաղափարախօսութիւններ շռայլողները՝ պարզապէս վարձկաններ էին երիտթուրք ղեկավարութեան կողմէ վարձատրուող, որոնք ընդհանրապէս եւրոպայէն եկած եւ Կ. Պոլիս հաստատուած ոչ թուրքեր էին: Այս խորամանկ իմաստակները իսլամ կրօնքը շատ լաւ սերտած էին, սակայն անոր ուսուցմունքներուն հակասող ու նենգ դարձուածքներով օժտուած տեսութիւններ կը ստեղծէին, հայերը բնաջնջելու թուրք ղեկավարութեան ծրագիրներուն յարմարող շինծու գաղափարախօսութիւններ մէջտեղ նետելով:



Թուրք այլախոհ պատմաբան Թաներ Աքչամ «Ամօթալի Արարք Մը» խորագրեալ եւ «Հայոց Ցեղասպանութիւնն Ու Թրքական Պատասխանատուութեան Հարցը» երնթախորագրեալ իր հեղինակած անգլերէն գիրքով, Մեթրոփոլիթըն պուքս, Հենրի Հոլթ եւ ընկ., Նիւ Եորք, 2007, 484 էջ (A Shameful Act - The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, A Holt Paperback Metropolitan Books/Henry Holt and Company- New York, 2007, 484 p.), թրքական ազգայնականութեան կ'անդրադառնայ՝ ի շարս Հայոց Ցեղասպանութեան առընչուած այլ սիւթերու: Թաներ Աքչամ թրքական ազգայնամուլութիւնը ազգայնականութիւն կը կոչէ, իբրեւ մեղմացուցիչ հանգամանք, յայտնի չէ ի՞նչ պատճառով: Կարգ մը պատմաբաններ, որոնց մէջ հայեր, որոնք արեւմտամետ ուղղութեան կը հետեւին, այլեւայլ պատրուակներով

Նկատել կու տան, թէ թրքական ազգայնամուլութիւն կոչելը գիտական մօտեցումէ հեռու է

Եւ չեն ուզեր ազգայնամուլութիւն բառով իսկական որակումը ընել թրքական

ազգայնականութեան: Ճշմարտութիւնը խեղաթիւրելու համար չարին ծառայողներուն պատրուակներն ու պատճառաբանութիւնները չեն պակսիր:

Թաներ Աքչամ Նախ կը բացատրէ թրքական ազգայնամուլութեան՝ իր որակումով թրքական ազգայնականութեան ծագումը, անոր սկիզբը սահմանելով ռուս-թրքական 1878-ի պատերազմը: Ապա ան իբրեւ Համաթրքական (Panturkist)


գաղափարաբանութեան հեղինակներու գլխաւորը՝ շեշտը կը դնէ թուրք Չիա Կեօքալիի փիլիսոփայական գործերուն վրայ, իբրեւ թուրքերու ազգայնամուլութեան Նախահայրը: Սկիզբէն հարկ է շեշտել, որ Թաներ Աքչամ հաւանաբար Նիւ Եորք ըլլալուն պատճառով, բնաւ չի յիշեր թէ Համաթրքութեան գաղափարի հեղինակները սիոնիստ հրեաներ էին, ինչպէս հունգարացի հրեայ-սիոնիստ Արմինիոս Վամպերի, ամստրիացի հրեայ-սիոնիստ Ֆրանց Ֆոն Վերներ (Մուրատ Էֆէնտի կեղծանունով), լեհ հրեայ-սիոնիստ Քոնսթանթի Պոռժեցքի (Մուսթաֆա Ճելալետտին փաշա կեղծանունով), ֆրանսացի հրեայ-սիոնիստ Լեօն Բահեօն, գերմանահպատակ հրեայ-սիոնիստ Ալպրթ Քոհէն (Թեքին Ալի կեղծանունով), Հալիտ Էտիպ ծածկանունով ծպտուած հրեայ-սիոնիստ գրագիտուհին, եւայլն «... եւ հոսկ ուրեմն է որ հրապարակ ելաւ առաջին թուրք բանթուրքիստ տեսաբանը Չիա Կեօքալի անունով, որ՝ իրականութեան մէջ աշակերտն էր հրեայ-սիոնիստ հիմնադիր-քարոզիչներուն...» (այս տուեալները քաղուած են եւ մէջբերումը կատարուած է Մեթր Գասպար Տերտերեանի «Սիոնիզմի Եւ Բանթուրքիզմի Առնչութիւնները Եւ Անոնց Սպառնալիքը Հայաստանի Լիներութեան» գրքոյէն, հրատարակութիւն Լիբանանահայ Գրական Շրջանակի, Պէյրուք, 1990, էջ 10-12):

Չիա Կեօքալի կ'առաջարկէ վերադառնալ հին Օսմանեան ըմբռնողութեան եւ ետդարձ մը ընելով վերջ դնելու «իսլամ-քրիստոնեայ հաւասարութեան ցնորք»ին (էջ 88, Թաներ Աքչամ): Յիշեցնելու կարգով ըսենք թէ Երիտթուրքերը իշխանութեան գլուխ երբ հասան այս հաւասարութեան հասկացողութիւնը քարոզեցին բայց չգործադրեցին: Յստակ էր որ Նախկին օսմանիզմը կեղեքած էր հայերը եւ ամէն ինչէ զուրկ դարձուցած զանոնք: Ճիշդ այս կետին էր որ Կեօքալի կ'ուզէր վերադարձնել երկիրը:

Թաներ Աքչամ կը նշէ թէ Հայասպանութեան դրդապատճառը լաւ ըմբռնելու համար կարելոր է գիտնալ Կեօքալիի տեսութեան գաղափարական հիմքերը: Չիա Կեօքալի կ'ըսէ թէ երբ թուրք ազգը ինքզինք վտանգի առջեւ կը տեսնէ, ան ոչ մէկ բարոյական պարտադրանք կը զգայ ամէն միջոցներով չհակազդելու համար վտանգին: Ահաւասիկ Հայոց Ցեղասպանութեան պատասխանատուութեան կանխամտածուած արդարացման փորձի օրինակ մը, որ Կեօքալիի կարծիքով թուրքերը կ'արդարացնէ ընելու ամէն ինչ որ ի նպաստ իրենց ազգին է:

Փաստացի է այն իրողութիւնը թէ Կեօքալի մասնաւոր ուսումնասիրութիւններ կատարած է պետութեան մէջ ապրող փոքրամասնութիւններու մասին, մանաւանդ հայոց: Այս գործը անելի մանրամասն գիտելիքներով օգտագործուած է՝ տեղեկութիւններ

հաւաքելու համար Հայաստանի արեւմտեան հատուածի ցեղային-կրօնական կազմութեան մասին: 1913-ին Երիտթուրք կառավարութեան կողմէ Ներքին Գործոց Նախարարութեան մէջ մասնաւոր պաշտօնատուն մը բացուած է՝ Գաղթականներու Վերաբնակեցման Գրասենեակ անունով: Այս գրասենեակը կը զբաղէր պալքաններէն եւ այլ վայրերէ թուրքերու վերաբնակեցմամբ Հայաստանի արեւմտեան հատուածին մէջ:



Յայտնի իթթիհատական խալիլ Մենթէշէ իր յուշերուն մէջ հետեւեալը գրած է. «Թալաաթ փաշան էր որ առաջարկած էր երկիրը մաքրագործել դաւաճան տարրերէ» (Էջ 92, Թաներ Աքչամ): Անոր առաջարկը ամբողջացնողը եղած է իթթիհատական պատասխանատու Քուլչուպաշը Էսրէֆ, որ յայտարարած է թէ «այդ դաւաճան տարրերը ոչ իսլամներն էին, որոնք պէտք է սպաննուէին», աւելցնելով որ «այս արարքը ազգային հարց մըն է» (Էջ 92, Թաներ Աքչամ):

Վերոնշեալ բազմազոյն սիոնիստ տարրերու կեղծ քարոզչութեան իբրեւ արդիւնք տեղի ունեցաւ Հայոց Մեծ Եղեռնը: Այս մասին Մեթր Գասպար Տերտերեան կ'ըսէ. «Յստակ է ուրեմն, որ Բանթուրքիզմի եւ Բանթուրանիզմի հիմնադիրները սիոնիստներ էին բացառապէս... որոնք հեղինակեցին եւ քարոզեցին զայն ամբողջ կէս դար (1873-1923), մինչեւ որ կերպարանաւորուիլ սկսաւ Արդի Թուրքիան կամ Քեմալական Թուրքիան» (Էջ 13, Գասպար Տերտերեան):

Այս բոլոր տեղեկութիւնները ի մտի ունենալով, աւելի յստակ կը դառնայ ներկայիս Հայաստանի արեւելեան հատուածին մէջ տեղի ունեցող Ժխտական զարգացումները թուրքեւազերիական համաթուրանական ձգտումներուն իբրեւ արդիւնք, որուն մէջ ակնյայտ է սիոնիզմի մատը համաթուրանականներու հակահայ գործունեութեան մէջ, սիոնական պետութեան՝ Իսրայէլի բացայայտ ամեն տեսակի միջամտութիւններով:



**There are no comments yet.**